

## Գ Լ Ո Ւ Խ 12.2

### Առևտրային քաղաքականություն. ոչ տարիֆային գործիքներ

Արտաքին առևտրի տեսության վերլուծությունը մեզ հանգեցրեց այն միարժեք եզրակացություններ, որ ազատ առևտուրն ընդլայնում է հասարակության բարեկեցությունը: Ազատ առևտրից երկիրը շահում է, քանի որ առևտուրն ընդլայնում է ընթացիկ սպառումը: Մասնավորապես, այն հնարավորություն է տալիս սպառել ապրանքների այնպիսի համախումբ, որը գտնվում է արտադրական հնարավորությունների սահմանից դուրս և հետևաբար՝ տեղական արտադրության միջոցով անհասանելի է:

Բացի նշյալ ստատիկ օգուտից՝ ազատ առևտուրը ստեղծում է մի շարք դինամիկ օգուտներ: Այսպես.

- Ազատ առևտուրն ընդլայնում է ոչ միայն ընթացիկ, այլև ապագա սպառումը, քանի որ առևտրի շնորհիվ երկիրը ներմուծում է կապիտալ միջոցներ, ինչն ընդլայնում է երկրի արտադրական հնարավորությունները:

- Ազատ առևտուրն ընդլայնում է երկրի արտադրական հնարավորությունները նաև այն բանի շնորհիվ, որ դյուրացնում և արագացնում է նոր տեխնոլոգիաների և գիտելիքների փոխանցումը:

- Ազատ առևտուրը խթանում է մրցակցությունը, քանի որ առևտրի ազատականացումը խաթարում է տեղական մոնոպոլիաների տնտեսական, հետևաբար նաև քաղաքական իշխանությունը:

- Ազատ առևտուրն ընդլայնում է շուկայի մեծությունը, ինչն արտադրողներին հնարավորություն է տալիս օգտվել ծավալի էֆեկտի խնայողությունից: Արդյունքում՝ արտադրողների միջին ծախսերը կրճատվում են, ինչի շնորհիվ կրճատվում են թողարկման գները:

Այսպիսով, ազատ առևտուրը լավագույն քաղաքականությունն է, որ կառավարությունները կարող են անել: Բայց այդ դեպքում ինչպե՞ս է, որ ազատ առևտուրը հաճախ սահմանափակվում է: Առավել որոշակի, ինչպե՞ս է, որ կառավարություններն իրագործում են մի քաղաքականություն, որի արդյունքում հասարակության բարեկեցությունը նվազում է:

Պատճառն այն է, որ կառավարությունները ցանկանում են առավելագույնի հասցնել իրենց վերընտրվելու հավանականությունը: Ուստի՝ առևտրային քաղաքականության, այն է՝ մաքսերի, քվոտաների, լրավճարների և այլ միջոցներով սատարում են քաղաքականապես զորեղ խմբերին: Բացի այդ, մաքսատուրքերը երրորդ աշխարհի կառավարությունների համար եկամուտների ստացման դյուրին միջոց են:

\* \* \*

Ստորև շարունակում ենք կատարյալ մրցակցային իրավիճակում առևտրային քաղաքականության վերլուծությունը, և մասնավորապես անդրադառնում ենք առևտրի ոչ տարիֆային կարգավորման գործիքներին:

Ինչպես ցույց կտանք, ոչ տարիֆային գործիքները, ճիշտ այնպես, ինչպես մաքսատուրքը, որպես կանոն հանգեցնում են հասարակության բարեկեցության նվազմանը:

## Քանակական սահմանափակում՝ քվոտա

Ներմուծման քվոտայի միջոցով երկիրը սահմանում է ապրանքի թույլատրելի քանակը, որը կարելի է ներմուծել որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Քվոտան լինում է բացարձակ կամ սակագնային:

Բացարձակ քվոտայի դեպքում սահմանվում է առավելագույն թույլատրելի քանակը, որից ավելի ներմուծումն արգելվում է:

Սակագնային քվոտայի դեպքում սահմանվում է որոշակի քանակ, որի շրջանակում մաքսադրույքը ցածր է, իսկ ավել մեծ քանակ ներմուծելու դեպքում դրույքն էականորեն բարձրանում է: Այսպես՝ Ռուսաստանում մսամթերքի ներմուծումը 2012թ-ին կարգավորվում էր սակագնային քվոտային միջոցով: Տավարի մսի ներմուծման քվոտան 560հզ տոննա էր: Քվոտայի շրջանակում մաքսատուրքը 15% էր, քվոտայից դուրս՝ 55%:

Հայաստանում քվոտաներ պաշտոնապես չեն կիրառվում:

Եվրոպական միությունում ներմուծման քվոտաներ ներկայում կիրառվում են պողպատի (Ռուսաստանից, Ղազախստանից, Ուկրաինայից) և փայտանյութի (Ռուսաստանից) ներմուծման նկատմամբ ([trade.ec.europa.eu/sigl](http://trade.ec.europa.eu/sigl)):


Դիտարկենք փոքր երկրում քվոտայի ազդեցությունը մասնակի հավասարակշռության դեպքում:

Գծ. 12-13-ում ազատ առևտրի հավասարակշիռ գինը սկզբնապես  $P_X^1$  է, որի դեպքում ներմուծումը  $X^2 - X^1$  է:

Այնուհետև՝ կառավարությունը սահմանում է ներմուծման քվոտա  $X^4 - X^3$  չափով: Գինը ներքին շուկայում բարձրանում է  $P_X^2$ , ներքին արտադրությունն ընդլայնվում է  $X^1$ -ից  $X^3$ , սպառումը կրճատվում է  $X^2$ -ից  $X^4$ :

### Գծանկար 12-13:

Ներմուծման քվոտայի ազդեցությունը փոքր երկրում (մասնակի հավասարակշռություն)



Քվոտայի ազդեցությունը  $a$ ,  $b$  և  $d$  տիրույթների առումով նույնն է, ինչ մաքսատուրքի դեպքում, բայց  $c$  տիրույթի առումով ազդեցությունը կարող է էական տարբերվել:

Այսպես՝ կախված նրանից, թե ինչ սկզբունքով է քվոտան բաշխվում՝  $c$  տիրույթը կարող է բաժին ընկնել կառավարությանը, ներմուծողներին, արտերկրի արտադրողներին և կոռումպացված պետական պաշտոնյաներին:

Այսպես, երբ ներմուծման քվոտան իշխանությունը տրամադրել է որևէ օլիգարխի, ապա վերջինն այդ ապրանքը միջազգային շուկայում ձեռք կբերի  $P_X^1$  գնով, իսկ ներքին շուկայում կիրացնի  $P_X^2$  գնով: Արդյունքում՝  $c$  տիրույթը (քվոտայի ռենտան) բաժին կընկնի այդ օլիգարխ ներմուծողին (բնականաբար, նման իրավիճակ հնարավոր է իշխանություն-օլիգարխիա փոխադրված համագործակցության դեպքում):

Եւ տիրույթի հասցեատերը կլինի կառավարութեան բյուջեն, եթե քվոտան ներմուծողների միջև բաշխվի (օրինական և թափանցիկ) աճուրդի միջոցով: Այդ դեպքում, աճուրդում ներմուծելու իրավունք ձեռք բերողները կվճարեն միավորի համար մինչև  $P_X^2 - P_X^1$  գին:

Բայց եթե կառավարությունը քվոտան բաշխում է ներմուծման թույլտվություն տալու, ոչ թե աճուրդի միջոցով, ապա կոռուպցիան անխուսափելի է:

Եւ տիրույթը բաժին կընկնի արտերկրյա արտադրողներին, եթե արտերկրի կառավարությունը կիրառի արտահանման կամավոր սահմանափակում:

Այսպես՝ 1981-94թթ-ին ԱՄՆ Ճապոնիային պարտադրեց մարդատար ավտոմեքենաների ԱՄՆ արտահանման կամավոր սահմանափակում: Ըստ այդմ՝ Ճապոնիան «կամավոր» սահմանափակում էր ավտոմեքենաների արտահանումն ԱՄՆ սկզբում տարեկան 1.68մլն հատ, հետագայում 2.3մլն հատ քանակով (Berry, Levinsohn, & Pakes, 1995):

ԱՄՆ ինքնուրույն չէր սահմանափակում ավտոմեքենաների ներմուծումը, քանի որ ձևացնում էր, թե Առևտրի համաշխարհային կազմակերպությունում (ԱՀԿ) ստանձնած պարտավորությունները չի խախտում:

Արդյունքում՝ Ճապոնիայի կառավարությունը ԱՄՆ արտահանման քվոտան բաշխում էր ճապոնական ավտոարտադրողների միջև, և Եւ տիրույթը բաժին էր ընկնում հենց ճապոնական ավտոարտադրողներին:

1995թ-ից ԱՀԿ անդամ երկրները պարտավորվել են արտահանման կամավոր սահմանափակումներ չկիրառել: Այսինքն՝ ԱՄՆ պարտավորվել է այսուհետ այդ հարցում ոչ մի երկրի բռնության չենթարկել:

Այսպիսով՝ քվոտայի դեպքում փոքր է հավանականությունը, որ Եւ տիրույթը բաժին կընկնի հասարակությանը: Եթե կառավարությունն ուզենար, որ Եւ տիրույթը բաժին ընկնի պետական բյուջեին, ապա նա միշտ էլ կարող էր քվոտայի փոխարեն մաքս սահմանել: Եթե կառավարությունը քվոտա է սահմանել, ապա նա Եւ տիրույթի հետ կապված բոլորովին այլ նպատակներ ունի:

## Մաքսի և քվոտայի համեմատումը

Համեմատենք քվոտայի և մաքսի տնտեսական հետևանքները փոքր երկրի դեպքում: Գծ. 12-14-ում սկզբնապես քվոտան համարժեք է մաքսին այն առումով, որ երկու դեպքում էլ ազատ առևտրի գինը եղել է  $P_X^1$ , ապա մի դեպքում քվոտայի, մյուս դեպքում մաքսի հետևանքով գինը բարձրացել է  $P_X^2$ , իսկ ներմուծումը երկու դեպքում էլ  $X^4 - X^3$  է:

Համարենք՝ պահանջարկը նույն չափով ընդլայնվում է  $D^1$ -ից  $D^2$ :


Քվոտայի դեպքում պահանջարկի աճից ներմուծումը չի ընդլայնվում ( $X^5 - X^6 = X^4 - X^3$ ): Հետևաբար՝ ընդլայնվում է միայն ներքին արտադրությունը  $X^3$ -ից  $X^6$ , իսկ գինը բարձրանում է  $P_X^2$ -ից  $P_X^3$ : Շեշտենք՝ ներքին արտադրությունը նվազ արդյունավետ է, քան արտաքինը, բայց ընդլայնվում է, քանի որ արտաքին մրցակցությունից պաշտպանված է քվոտայի միջոցով:

Մաքսատուրքի դեպքում պահանջարկի աճի հետևանքով ներմուծումն ընդլայնվում է, որի շնորհիվ գինը չի փոխվում ու ներքին արտադրությունը չի աճում: Այսինքն՝ պահանջարկի աճը բավարարվում է սոսկ ներմուծման հաշվին: Նոր հավասարակշռությունում ներմուծումը  $X^7 - X^3$  է:

Այսպիսով՝ քվոտան ոչ միայն ծնում է կոռուպցիա, այլև պայմանավորում է մաքսի համեմատ ռեսուրսների ավելի անարդյունավետ բաշխում: Նշված պատճառներով մաքսի կիրառումը քվոտայի համեմատ նախընտրելի է հասարակության համար (անշուշտ՝ քվոտան բաշխող պաշտոնյաների համար քվոտան է նախընտրելի):

**Գծանկար 12-14:**

Ներմուծման քվոտայի և մաքսի համեմատումը փոքր երկրի դեպքում, երբ պահանջարկն աճում է նույն չափով



**Լրավճար**

Կառավարությունները տեղական արտադրությունը կամ արտահանումն ընդլայնելու կեղծ մտահոգությամբ երբեմն արտադրողներին տրամադրում են լրավճար (սուբսիդիա): Լրավճարը արտադրողին տրվող ուղղակի կամ անուղղակի վճար է, որի արդյունքում ապրանքի իրացումից արտադրողի ստացած գինը գերազանցում է սպառողի վճարած գնին:

Համաշխարհային տնտեսությունում առավել նշանակալի լրավճար ստացող ոլորտը գյուղատնտեսությունն է: Այսպես՝ 2012-14թթ-ին գյուղմթերք արտադրողներին փոխանցված լրավճարները տարեկան կազմել են \$601մլրդ, ինչը միջին հաշվով կազմել է գյուղմթերք արտադրողների հասույթի 18%-ը: Առավել նշանակալի լրավճարներ տրամադրել են Չինաստանը, Եվրոպական միությունը, ԱՄՆ-ը, Ճապոնիան: Ընդ որում Նորվեգիայում, Շվեյցարիայում, Ճապոնիայում, Կորեայում գյուղմթերք արտադրողներին տրվող աջակցությունը կազմել է նրանց եկամտի 50-60%: Այդ ցուցանիշը Թուրքիայում, Եվրոպական Միությունում, Չինաստանում շուրջ 20% էր, Ռուսաստանում և ԱՄՆ-ում՝ շուրջ 10% (OECD, 2015):

Մինչև 2005թ Եվրոպական Միությունում յուրաքանչյուր կովի հաշվով օրական տրվում էր \$2.2 լրավճար (New York Times, 27.10.2005): Ուշագրավ է, որ Համաշխարհային բանկի ամենավերջին գնահատականով երկրագնդի 770 մլն բնակիչներ 2013թ-ին օրական \$1.9-ից պակաս եկամուտ ունեին (World Bank, 2016): Եվրոպայի կովերի կենսամակարդակը գերազանցում է երրորդ աշխարհի բազմաթիվ ոչ կով բնակիչների կենսամակարդակը:

Առևտրի համաշխարհային կազմակերպության «Լրավճարների վերաբերյալ» համաձայնագրով արգելվում է արտահանման խրախուսման կամ ներմուծման փոխարինման լրավճարների տրամադրումը (WTO, 1995): Մնացյալ բոլոր տիպի լրավճարները թույլատրելի են, եթե ուղղակի վնաս չեն հասցնում որևէ այլ երկրի արտադրողի: Ընդ որում, համարվում է, որ վնաս է պատճառվել (ա) երբ որևէ երկրի լրավճարի հետևանքով վնասվում է մեկ այլ երկրի ներքին արտադրությունը, (բ) երբ որևէ երկրի լրավճարի հետևանքով մեկ այլ երկրի արտադրանքը ոչ մրցունակ է դառնում որևէ երրորդ երկրում, (գ) երբ որևէ երկրի լրավճարի հետևանքով մեկ այլ երկրի արտադրանքը ոչ մրցունակ է դառնում լրավճար տրամադրող

երկրում: Երկիրը, որը վնաս է կրել, կարող է սահմանել փոխհատուցող մաքսատուրքեր լրավճար տրամադրող երկրի ներմուծման նկատմամբ կամ դիմել ԱՀԿ վեճերի կարգավորման մարմնին՝ լրավճարի վերացման պահանջով:

## Ներմուծման փոխարինման լրավճար

Փոքր երկրի օրինակով դիտարկենք ներմուծման փոխարինման լրավճարի ազդեցությունը մասնակի հավասարակշռության համատեքստում:

Գծ. 12-15-ում  $S_d$ -ն  $X$  ապրանքի ներքին առաջարկն է, իսկ  $D_d$ -ն՝ ներքին պահանջարկը:

$P_w$  տվյալ ապրանքի համաշխարհային գինն է: Քանի որ առևտուրն ազատ է, ապա մեր ստանդարտ ենթադրությունների շրջանակում միջազգային գինը հավասար է ներքին գնին:

$S_w$  ներմուծման միջազգային առաջարկն է: Այն բացարձակ առաձգական է, քանի որ երկիրը փոքր է: Այսինքն՝ երկիրը կարող է ներմուծել  $X$  ապրանքի ցանկացած քանակ՝ միևնույն  $P_w$  գնով:

Սկզբնապես, երբ առևտուրն ազատ է, երկիրը ներմուծում է ապրանքի  $X_2 - X_1$  քանակ:

Այնուհետև կառավարությունը որոշում է տրամադրել արտադրության յուրահատուկ լրավճար՝  $s$  մեծությամբ: Այսինքն՝  $X$  ապրանքի յուրաքանչյուր թողարկված միավորի հաշվով արտադրողներին տրամադրվում է  $s$  մեծությամբ լրավճար:

Ընդհանուր դեպքում արտադրության լրավճարը տրամադրվում է արտադրողների եկամուտները կամ թողարկումն ընդլայնելու նպատակով:

Լրավճարի հետևանքով ապրանքի գինը սպառողների համար չի փոխվում, քանի որ երկիրը փոքր է, ու առևտուրն՝ ազատ: Բայց արտադրողների համար փաստացի գինը լրավճարի չափով բարձրանում է՝  $P_s = P_w + s$ :


Արտադրողների համար լրավճարը համարժեք է արտադրության ծախսերի կրճատմանը: Այդ պատճառով առաջարկը լրավճարի չափով տեղաշարժվում է աջ: Արդյունքում արտադրությունն ընդլայնվում է  $X_1$ -ից  $X_3$ , և ներմուծումը կրճատվում է մինչև  $X_2 - X_3$ :

Հարկատուների հաշվին լրավճարի ֆինանսավորման ծախսը, որը կատարում է կառավարությունը, հավասար են միավոր լրավճարի և արտադրության քանակի արտադրյալին՝  $(P_s - P_w) \times X_3 = s \times X_3$ , այն է՝  $a + b$  տիրույթին:

$a$  տիրույթն արտադրողի ավելցուկի աճն է, իսկ  $b$ -ն հասարակության համար կորուստ է, քանի որ բնութագրում է արտադրության անարդյունավետ ընդլայնումը:

### Գծանկար 12-15:

Ներմուծման փոխարինման լրավճարի ազդեցությունը փոքր երկրի դեպքում



Նկատենք՝ լրավճարի դեպքում սպառման անարդյունավետ կրճատման կորուստ չկա, քանի որ սպառողների համար գինը չի փոխվում: Այդ պատճառով թվում է, թե լրավճարը մաքսի համեմատ գերադասելի է: Բայց լրավճարի ֆինանսավորման համար անխուսափելիորեն

կրճատվում են այլ ոլորտների ծախսերը, ինչպես՝ առողջապահության, կրթության, հանցավորության կանխարգելման ծախսերը:

**Աղյուսակ 12-3:** Արտադրության լրավճարի ազդեցությունը փոքր երկրի բարեկեցության վրա

Սպառողի ավելցուկ	0
Արտադրողի ավելցուկ	+ a
Կառավարության բյուջե	− (a + b)
Երկրի բարեկեցություն	− b

Արտադրության լրավճարի արդյունքում երկրի ներմուծումը, այսինքն՝ մնացյալ աշխարհի արտահանումը կրճատվում է: Սակայն փոքր երկրի դեպքում արտադրության լրավճարի ազդեցությունը մնացյալ աշխարհի վրա այնքան աննշան է, որ այն կարող ենք համարել զրո և անտեսել:


### Արտահանման լրավճար. փոքր երկիր

Արտադրության լրավճարը, ինչպես ցույց տվեցինք, ընդլայնում է արտադրությունը և հանգեցնում ներմուծման փոխարինման: Իսկ արտահանման լրավճարի նպատակը արտահանման (և ոչ թե ընդհանուր արտադրության) ընդլայնումն է:

Գծ. 12-6-ում վերլուծվում է փոքր երկրում արտահանման յուրահատուկ լրավճարի ազդեցությունը մասնակի հավասարակշռության համատեքստում:

Ազատ առևտրի դեպքում X ապրանքի գինը  $P_X^0$  է, իսկ արտահանումը  $X^2 - X^1$  է:  $D^w$  փոքր երկրի արտահանման նկատմամբ համաշխարհային պահանջարկն է, որը բացարձակ առաձգական է: Այսինքն՝ անկախ արտահանման քանակից՝ համաշխարհային գինն անփոփոխ է և կազմում է  $P_X^0$ :

**Գծանկար 12-16:**  
Արտահանման լրավճար.  
փոքր երկիր, մասնակի հավասարակշռություն



Երկիրը փոքր է, և արտահանման լրավճարը միջազգային գնի վրա չի ազդի: Այսինքն՝ լրավճարի հետևանքով, երբ արտահանման քանակն ընդլայնվում է, արտաքին շուկայում գները չեն նվազում:

Արդյունքում՝ լրավճարի տրամադրումից հետո արտահանողներն ապրանքն արտաքին շուկայում նախկինի պես իրացնում են  $P_X^0$  գնով, բայց լրավճարը ստանալուց հետո իրենց փաստացի գինը կազմում է  $P_X^0 + s$ , որտեղ  $s$  լրավճարն է:

Միևնույն ժամանակ, ներքին շուկայում մրցակցություն շնորհիվ գինը  $P_X^0$ -ից բարձրանում է  $P_X^0 + s$ : Ներքին գնի աճի պատճառն այն է, որ լրավճարի շնորհիվ արտադրողների համար արտահանումը դարձել է առավել եկամտաբեր: Ուստի՝ արտադրողները ներքին շուկայում կիրացնեն միայն այն դեպքում, եթե ներքին գինը պակաս չլինի  $(P_X^0 + s)$ -ից:

Քանի որ գինը բարձրանում է, ապա առաջարկն ընդլայնվում է  $X^2$ -ից  $X^4$ , իսկ սպառումը կրճատվում է  $X^1$ -ից  $X^3$ : Համապատասխանորեն՝ արտահանումը  $(X^2 - X^1)$ -ից ընդլայնվում է  $X^4 - X^3$ :

Արտահանման լրավճարի արդյունքում արտադրողի ավելցուկն ընդլայնվում է  $a + e + b + c + d$  տիրույթի չափով: Իսկ սպառողի ավելցուկը կրճատվում է  $a + e$  տիրույթի չափով: Միևնույն ժամանակ, կառավարությունը հարկատուների միջոցները  $e + b + c + d + m$  տիրույթի չափով ծախսում է արտահանման լրավճարը ֆինանսավորելու համար: Արդյունքում՝ երկրի բարեկեցության գույք կորուստը կազմում է  $e + m$ :

$e$  բնութագրում է ներքին սպառման կրճատման հետևանքով բարեկեցության կորուստը: Սպառման այդ կրճատումը կորուստ է, քանի որ  $X^1 - X^3$  քանակի արտահանումից ստացվող հասույթը  $k + f$  է: Այնինչ երկրի սպառողներն այդ քանակը գնահատում են  $k + f + e$ , որն ավելի մեծ է, քան արտահանումից ստացվող հասույթն է:

$m$  բնութագրում է արտադրության ընդլայնման հետևանքով բարեկեցության կորուստը: Արտադրության այդ ընդլայնումը կորուստ է, քանի որ  $X^4 - X^2$  քանակի արտահանումից ստացվող հասույթը  $w + g$  է: Այնինչ այդ քանակի արտադրության ծախսն ավելի մեծ է և հավասար է  $w + g + m$ :

<b>Աղյուսակ 12-4:</b> Արտահանման լրավճարի ազդեցությունը փոքր երկրի բարեկեցության վրա	
Սպառողի ավելցուկ	$-(a + e)$
Արտադրողի ավելցուկ	$+(a + e + b + c + d)$
Կառավարության բյուջե	$-(e + b + c + d + m)$
Երկրի բարեկեցություն	$-(e + m)$

Այսպիսով՝ արտահանման լրավճարը հանգեցնում է ռեսուրսների անարդյունավետ օգտագործման, ներքին սպառման կրճատման, ներքին գնի աճի և հարկատուների միջոցների վատնման:

### Արտահանման լրավճար. մեծ երկիր

Արտահանման լրավճարի ազդեցությունը վերլուծենք արտահանող երկրի և մնացյալ աշխարհի տեսանկյունից միաժամանակ: Ընդ որում, համարենք, որ արտահանող երկիրը մեծ երկիր է:

Գծ. 12-17-ում  $D$  և  $S$  արտահանող երկրի, իսկ  $D^*$  ու  $S^*$  մնացյալ աշխարհի պահանջարկն ու առաջարկն են,  $X_S$  արտահանման առաջարկն է,  $M_D$  ներմուծման պահանջարկն է:

Ազատ առևտրի հավասարակշիռ գինը  $\bar{P}$  է, որի դեպքում երկիրն արտահանում է  $X_2 - X_1 = EX_1$ , և նույնքան ներմուծում է մնացյալ աշխարհը՝  $X_2^* - X_1^* = EX_1^*$ :

Համարենք՝ երկիրը որոշում է տրամադրել արտահանման յուրահատուկ լրավճար՝ յուրաքանչյուր միավորի համար  $s$  մեծությամբ:

Լրավճարի շնորհիվ երկրի արտահանումը կաճի, բայց ներքին շուկայում առաջարկը կկրճատվի (քանի որ արտադրողների համար արտահանելն ավելի շահեկան է, քան տեղական շուկայում իրացնելը): Արդյունքում՝ ներքին շուկայում գինը կբարձրանա՝ հավասարվելով արտահանողների համար փաստացի գնին (որն արտերկրում իրացման գնի ու լրավճարի


գումարն է): Վերջին հաշվով՝ երկրի արտադրությունն ընդլայնվում է  $X_2$ -ից  $X_4$ , տեղական սպառումը կրճատվում է  $X_1$ -ից  $X_3$ , արտահանումն աճում է  $(X_2 - X_1)$ -ից մինչև  $X_4 - X_3$ , գինը բարձրանում է  $\bar{P}$ -ից  $P$ :

Հակառակ փոփոխություններ են տեղի ունենում մնացյալ աշխարհում: Այնտեղ ներմուծումն աճում է  $(X_2^* - X_1^*)$ -ից մինչև  $X_4^* - X_3^*$ , գինը նվազում է  $\bar{P}$ -ից  $P^*$ , արտադրությունը կրճատվում է  $X_1^*$ -ից  $X_3^*$ , պահանջարկն աճում է  $X_2^*$ -ից  $X_4^*$ :

Նոր հավասարակշռությունում ( $\omega$ ) երկու երկրներում գները տարբերվում են լրավճարի մեծությամբ՝  $P = P^* + s$ , և ( $\rho$ ) մեկի արտահանումը հավասար է մյուսի ներմուծմանը՝  $X_4 - X_3 = EX_2 = X_4 - X_3$ :

**Գծանկար 12-17:**

Արտահանման լրավճարի ազդեցությունը



Արտահանող երկրում սպառողները տուժել են, քանի որ գինը բարձրացել է, բայց արտադրողները շահել են: Միևնույն ժամանակ, լրավճարի համար հասարակությունը պետք է վճարի: Դա կարող է կատարվել այլ ծախսերի կրճատման հաշվին, կամ լրացուցիչ հարկերի սահմանման հաշվին, կամ էլ պարտքի ընդլայնման հաշվին (վերջին դեպքում այլ ծախսերի կրճատումը կամ հարկերի բարձրացումը պարզապես հետաձգվում է):

Արտահանող երկրի բարեկեցության վրա արտահանման լրավճարի հանրագումարային ազդեցությունը բացասական է և հավասար է  $b + d + n + o + k$  տիրույթին:

$n + o + k$  հետևանք է առևտրի պայմանների վատացման, քանի որ արտահանման գինը  $\bar{P}$ -ից նվազել է  $P^*$ : Հիշենք, որ  $P$  տեղական շուկայում գինն է, և  $P = P^* + s$ :

$b$ -ն արտահայտում է ներքին սպառման անարդյունավետ կրճատման կորուստը,  $d$ -ն՝ տեղական արտադրության անարդյունավետ ընդլայնման կորուստը:

**Աղյուսակ 12-5:** Լրավճարի ազդեցությունը բարեկեցության վրա

	Արտահանող երկիր	Մնացյալ աշխարհ
Սպառողի ավելցուկ	$-(a + b)$	$+(\rho + \kappa + \pi)$
Արտադրողի ավելցուկ	$+(a + b + c)$	$-(\rho + \kappa)$
Կառավարության բյուջե	$-(b + c + d + n + o + k)$	0
Երկրի բարեկեցություն	$-(b + d + n + o + k)$	$+\pi$

Ներմուծող երկրում, հակառակը, քանի որ գինը նվազում է, սպա սպառողները շահում են, իսկ արտադրողները վնասվում են: Մնացյալ աշխարհի առևտրի պայմանների բարելավումը



բնութագրվում է  $\kappa + \pi + \sigma$  տիրույթով: Միևնույն ժամանակ,  $\kappa$  արտադրության անարդյունավետ կրճատումն է, իսկ  $\sigma$  սպառման անարդյունավետ ընդլայնումն է:

Արդյունքում՝ մնացյալ աշխարհի բարեկեցությունը բարելավվում է  $\pi$  տիրույթի չափով: Չնայած մնացյալ աշխարհի բարեկեցությունը բարձրանում է, սակայն լրավճար տրամադրող երկրի կառավարությանը շնորհակալական բացիկ և օգային համբույր ուղարկելու փոխարեն մնացյալ աշխարհը հավանաբար կսահմանի փոխհատուցող մաքսատուրքեր:

## Մաքսատուրքի և լրավճարի համադրումը

Ներմուծման մաքսատուրքի դեպքում տեղական արտադրությունն ընդլայնվում է, սպառումը՝ կրճատվում (գծ. 12-1): Տնտեսության վրա միևնույն ազդեցությանը կարելի է հասնել արտադրության լրավճարի ու սպառման հարկի միաժամանակյա կիրառման միջոցով: Այսպես՝ արտադրության լրավճարն ընդլայնում է տեղական արտադրությունը, սպառման հարկը կրճատում է սպառումը, ճիշտ ինչպես ներմուծման մաքսատուրքի դեպքում:

Հետևաբար, եթե մաքսատուրքի նպատակը տեղական արտադրության ընդլայնումն է, կարելի է պարզապես արտադրության լրավճար տրամադրել՝ առանց սպառման վրա ներգործելու:

Հիշենք, որ մաքսատուրքի դեպքում փոքր երկրի զուտ կորուստը հավասար է արտադրության և սպառման անարդյունավետությունների գումարին. գծ. 12-1-ում դա  $b + d$  տիրույթն է: Այնինչ արտադրության լրավճարից հասարակության զուտ կորուստը հավասար է միայն արտադրության անարդյունավետությանը. գծ. 12-15-ում դա  $b$  տիրույթն է:

Անհրաժեշտ է, սակայն, հաշվի առնել, որ լրավճարը վճարում են բոլոր հարկատուները, այնինչ մաքսատուրքը վճարում են սոսկ նրանք, ովքեր սպառում են ներմուծվող ապրանքը:

Գծ. 12-18-ում համեմատում ենք փոքր երկրում մաքսատուրքի և լրավճարի ազդեցությունները ընդհանուր հավասարակշռության համատեքստում: Սկզբնապես, երբ առևտուրն ազատ է, և միջազգային գինը  $p$  է, ապա երկիրն արտադրում է  $Q$ -ում, և սպառում է  $C$ -ում՝  $U^1$  հասարակության անտարբերության կորի վրա: Նկատենք, երկիրը  $X$  ապրանքը ներմուծում է, իսկ  $Y$  ապրանքն արտահանում է:

Երբ փոքր երկիրը սահմանում է  $X$  ապրանքի ներմուծման մաքսատուրք, այն թեպետ չի ազդում միջազգային գնի վրա, բայց փոխում է ներքին հարաբերական գինը՝  $p$ -ից  $p^t$  (գծ. 12-18): Արդյունքում՝ արտադրությունը  $Q$ -ից տեղաշարժվում է  $N$ : Ներմուծվող ապրանքի տեղական արտադրությունն ընդլայնվում է, արտահանվող ապրանքի արտադրությունը՝ կրճատվում:


Արտադրելով  $N$  կետում՝ երկիրը շարունակում է առևտուր անել միևնույն  $p$  միջազգային հարաբերական գնով: Ուստի՝ սպառման կետը գտնվում է  $N$  կետով տարված  $p$  հարաբերական ուղղի վրա:

Միևնույն ժամանակ, սպառման որոշումները պետք է համապատասխանեն ներքին  $p^t$  հարաբերական գնին: Այսինքն՝ սպառման կետում սահմանային օգտակարությունների հարաբերությունը հավասար է հարաբերական գնին, ինչը գրաֆիկորեն նշանակում է, որ հասարակության անտարբերության կորը շոշափում է հարաբերական գնի ուղղին:

Արդյունքում՝ երկիրը մաքսատուրքի դեպքում սպառում է  $L$  կետում, որը գտնվում է  $N$  կետով տարված  $p$  հարաբերական գնի ուղղի վրա, և որում  $U^3$  անտարբերության կորը շոշափում է  $p^t$  հարաբերական գնի ուղղին:

**Գծանկար 12-18:**

Փոքր երկրում ներմուծման մաքսատուրքի և արտադրության լրավճարի ազդեցությունների համեմատումը



Այժմ համարենք, որ երկիրը ոչ թե X-ի ներմուծման մաքսատուրք է սահմանում, այլ X-ի արտադրության լրավճար է տրամադրում: Ընդ որում, լրավճարը տրամադրվում է այն շափով, որ արտադրությունը Q-ից տեղափոխվի N:

Լրավճարի հետևանքով ներքին գինը չի փոխվի և, ինչպես նախկինում, հավասար կլինի միջազգային  $p$  գնին: Արդյունքում՝ երկիրը, արտադրելով  $N$  կետում, սպառում է այդ կետով անցնող  $p$  ուղղի վրա: Քանի որ ներքին գինը նույնպես  $p$  է, ապա սպառման կետում անտարբերության կորը շոշափում է  $p$  հարաբերական գնի ուղղին: Հետևաբար՝ սպառման կետը  $E$  է:

Այսպիսով, եթե անտեսում ենք լրավճարի ֆինանսավորման խնդիրը, ապա մաքսատուրքի դեպքում երկրի բարեկեցությունը ( $U^3$ ) ավելի ցածր է, քան լրավճարի դեպքում ( $U^2$ ): Ահա թե ինչու համարվում է, որ լրավճարը երկրորդ լավագույն քաղաքականությունն է: Առաջին լավագույնը, բնականաբար, ազատ առևտուրն է:

**Արտահանման լրավճարը և փոխհատուցման մաքսատուրքը**

Մասնակի հավասարակշռության համատեքստում դիտարկենք երկու մեծ երկրների օրինակը, երբ մի երկիրը տրամադրում է արտահանման լրավճար, որին ի պատասխան մյուսը սահմանում է փոխհատուցման մաքսատուրք:

Դիցուք այդ երկրներն են ԱՄՆ և Եվրամիությունը (ԵՄ), իսկ առևտրում ներառված ապրանքն ինքնաթիռն է:

**Արտահանման լրավճար**

ԱՄՆ-ը ինքնաթիռների արտահանումը խրախուսելու համար սահմանում է արտահանման յուրահատուկ լրավճար  $s$  մեծությամբ (գծ. 12.19): Լրավճարի արդյունքում ինքնաթիռի գինը ԵՄ-ում նվազում է, իսկ ԱՄՆ-ում բարձրանում է:

Նախքան լրավճարի սահմանումը, երբ առևտուրն ազատ էր, երկու երկրներում գինը  $P$  էր, և ԱՄՆ-ի արտահանումը հավասար էր ԵՄ-ի ներմուծմանը ( $X_2 - X_1 = \bar{X}_2 - \bar{X}_1$ ):


Լրավճարի տրամադրումից հետո նոր հավասարակշռությունում, բնականաբար, ԱՄՆ-ի արտահանումը դարձյալ հավասար է ԵՄ-ի ներմուծմանը ( $X_4 - X_3 = \bar{X}_4 - \bar{X}_3$ ): Բայց գները երկու երկրներում տարբերվում են լրավճարի մեծությամբ.

$$P_{\text{ԱՄՆ}} = P_{\text{ԵՄ}} + s$$

Արտահանող երկրի բարեկեցության վրա լրավճարի ազդեցությունը բացասական է, քանի որ լրավճարի ֆինանսավորման ծախսը, որը վերջին հաշվով կատարում են հարկատուները, ինչպես նաև սպառողի ավելցուկի կրճատումը գումարային ավելի մեծ են, քան արտադրողի ավելցուկի աճը:

**Գծանկար 12.19:**

Արտահանման լրավճարի ազդեցությունը



**Աղյուսակ 12.6:** Արտահանման լրավճարի ազդեցությունը բարեկեցության վրա

	Արտահանող երկիր	Ներմուծող երկիր
Սպառողի ավելցուկ	$-(1 + 2)$	$+(\bar{1} + \bar{2} + \bar{3} + \bar{4} + \bar{5})$
Արտադրողի ավելցուկ	$+(1 + 2 + 3)$	$-(\bar{1} + \bar{2})$
Կառավարության բյուջե	$-(2 + 3 + 4 + 5 + 6 + 7 + 8 + 9)$	$0$
Երկրի բարեկեցություն	$-(2 + 4 + 5 + 6 + 7 + 8 + 9)$	$+(\bar{3} + \bar{4} + \bar{5})$
Համաշխարհային բարեկեցություն	$-(2 + 4) - (\bar{2} + \bar{6})^*$	

\*  $\bar{4} = 6 + 7 + 8, \bar{2} + \bar{6} = (\bar{3} - 5) + (\bar{5} - 9)$

Ներմուծող երկրում սպառողները շահում են, իսկ ներմուծման հետ մրցող արտադրությունը տուժում է: Բայց ներմուծող երկրի բարեկեցության վրա ընդհանուր ազդեցությունը դրական է:

Համաշխարհային բարեկեցության վրա ազդեցությունը, սակայն, բացասական է, քանի որ երկու երկրում էլ առկա են անարդյունավետության կորուստներ:

**Փոխհատուցման մաքսատուրք**

Թեպետ ԵՄ-ի բարեկեցությունը բարելավվել է, բայց տեղական արտադրությունը կրճատվել է: Համապատասխանորեն կրճատվել է զբաղվածությունը, և ժամանակ է անհրաժեշտ, մինչև ռեսուրսները կվերամասնագիտանան այլ, առավել արդյունավետ ոլորտներում: Ուստի ակնկալելի է, որ ի պատասխան ԱՄՆ-ի արտահանման լրավճարի, ԵՄ կսահմանի փոխհատուցման մաքսատուրք:

Ենթադրենք՝ փոխհատուցման մաքսատուրքը՝  $\phi$ , ԵՄ սահմանում է ԱՄՆ-ի արտահանման լրավճարի չափով.

$\phi = s$

Փոխհատուցման մաքսատուրքի հետևանքով ԵՄ-ում ապրանքի գինը բարձրանում է, ու քանի որ ԵՄ մեծ երկիր է, ապա ԱՄՆ-ում գինը նվազում է: Արդյունքում՝ երկու երկրներում գները վերադառնում են նախկին՝ ազատ առևտրին համապատասխանող մակարդակին:

Վերջնական հավասարակշռությունում գները պետք է բավարարեն հետևյալ առնչությունը.


$$P_{ԱՄՆ} + \phi = P_{ԵՄ} + s$$

Քանի որ  $\phi = s$ , ապա երկու երկրներում գները հավասարվում են, իսկ գները միմյանց հավասար են միայն ազատ առևտրի հավասարակշռությունում: Դրանով իսկ՝ գները վերականգնվում են ազատ առևտրին համապատասխանող մակարդակում:

Նմանապես առևտրի քանակը վերականգնվում է սկզբնական՝ ազատ առևտրին համապատասխանող մակարդակում:

**Գծանկար 12.20:**

Արտահանման լրավճարի և փոխհատուցման մաքսատուրքի համատեղ ազդեցությունը



Թեպետ առևտրի գինն ու քանակը վերականգնվել են ազատ առևտրին համապատասխանող մակարդակներում, առևտուրն ազատ չէ. ԱՄՆ տրամադրում է արտահանման  $s$  լրավճար, իսկ ԵՄ սահմանել է փոխհատուցման  $\phi$  մաքսատուրք:

**Աղյուսակ 12.7:** Արտահանման լրավճարի և փոխհատուցման մաքսատուրքի համատեղ ազդեցությունը բարեկեցության վրա

	Արտահանող երկիր	Ներմուծող երկիր
Սպառողի ավելցուկ	0	0
Արտադրողի ավելցուկ	0	0
Կառավարության բյուջե	$-(a + b + c + d)$	$+(\bar{a} + \bar{b} + \bar{c} + \bar{d})$
Երկրի բարեկեցություն	$-(a + b + c + d)$	$+(\bar{a} + \bar{b} + \bar{c} + \bar{d})$
Համաշխարհային բարեկեցություն	0	

Իսկ ինչպե՞ս է փոխվել բարեկեցությունը՝ ազատ առևտրի համեմատ:  
Քանի որ գինն ու քանակը սկզբնական մակարդակում են, ապա սպառողի ավելցուկը և արտադրողի ավելցուկը երկու երկրում էլ չեն փոխվել:

Միևնույն ժամանակ, ԱՄՆ-ի կառավարությունը կատարում է գծ. 12.20-ի  $a + b + c + d$  տիրույթին համարժեք ծախս լրավճարը ֆինանսավորելու համար: Իսկ ԵՄ-ի կառավարությունը ստանում է  $\bar{a} + \bar{b} + \bar{c} + \bar{d}$  տիրույթին համարժեք մաքսային եկամուտ:

Հետևաբար՝ վերջին հաշվով ԱՄՆ-ի կառավարությունը (և հետևաբար՝ ամերիկյան հարկատուները) ֆինանսավորում են ԵՄ-ի կառավարությանը (մնում է հուսալ, որ ԵՄ-ում կառավարությունը միջոցները չի վատնի):

## Գնագցում

Երբ մի երկրի արտադրողն արտերկրում ապրանքն իրացնում է ավելի ցածր գնով, քան ծագման երկրում, կամ արտերկրում իրացնում է ավելի ցածր գնով, քան արտադրության ծախսերն են, ապա առկա է գնագցում (դեմպինգ): Ինչ վերաբերում է ներմուծող երկրի արտադրողներին, ապա նրանք, սովորաբար, համարում են, որ գնագցում տեղի ունի բոլոր այն դեպքերում, երբ օտարերկրյա արտադրողն ապրանքն իրացնում է այնպիսի գնով, որի հետ իրենք չեն կարողանում մրցել:

Գնագցման դեպքում ներմուծող երկրի արտադրողները տուժում են, սպառողները՝ շահում: Իսկ կառավարություններին քաղաքական տեսանկյունից, սովորաբար, ավելի շահեկան է արտադրողների շահերի պաշտպանությունը:

Այդ պատճառով՝ այն երկրներում, ուր տեղական արտադրությունը զարգացած է, բայց որոշ քաղաքականապես զորեղ ոլորտներ նվազ մրցունակ են, կառավարությունը կանխում է գնագցումը՝ հակազնագցումային մաքսատուրքերի միջոցով: Այդ երկրներն են Հնդկաստանը (1995-2015թթ-ին կիրառել է 572 հակազնագցումային միջոց), ԱՄՆ-ը (359), Եվրոպական Միությունը (309), Արգենտինան (239), Բրազիլիան (228), Չինաստանը (181), Թուրքիան (170) և այլն (WTO, 2015):

Թիվ մեկ երկիրը, որի նկատմամբ կիրառվում են հակազնագցումային միջոցներ, բնականաբար Չինաստանն է՝ աշխարհի ամենամեծ ամենաէժեք արտադրողը: 1995-2015թթ-ին (ընդհանուր 3240-ից) նրա նկատմամբ կիրառվել է 820 հակազնագցումային միջոց: Հաջորդում են Հրվ Կորեան (225), Թայվանը (184), ԱՄՆ (169) և այլն (WTO, 2015):

2009թ-ին Եվրոպական Միությունը հակազնագցումային մաքսատուրք (13.4%) սահմանեց Հայաստանից Ռուսալ-Արմենալի արտադրած ալյումինե սովարաթղթի ներմուծման նկատմամբ (Global Trade Alert, 2015): Տակավին դա Հայաստանի նկատմամբ սահմանված միակ հակազնագցումային միջոցն է: Իսկ Հայաստանը երբևէ որևէ հակազնագցումային միջոց չի կիրառել:

Ինչ վերաբերում է ներմուծող երկրի սպառողներին, ապա նրանք առնվազն սկզբում շահում են, քանի որ հնարավորություն են ստանում ապրանքն ավելի ցածր գնով գնել: Բայց եթե գնագցում իրականացնող օտարերկրյա արտադրողը տեղական արտադրողներին շուկայից դուրս մղելուց և շուկայում մենաշնորհ դիրք ձեռք բերելուց հետո գները բարձրացնում է, ապա սպառողները վերջին հաշվով տուժում են:

Բայց եթե կառավարությունը հակազնագցումային միջոցներով դուրս է մղում օտարերկրյա արտադրողներին ու, տեղական արտադրողների համար ջերմոցային պայմաններ ստեղծելով, ապահովում է տեղական անարդյունավետ արտադրության գոյությունը, ապա սպառողներն ամեն դեպքում տուժում են: Թեպետ, որոշ սպառողների միգուցե սփոփի այն հանգամանքը, որ իրենց շահագործողը տեղական և ոչ թե օտարերկրյա արտադրողն է:

Ստորև վերլուծում ենք այն դեպքը, երբ արտադրողը արտերկրում վաճառում է ավելի ցածր գնով, քան տեղական շուկայում, բայց դա անում է ոչ թե արտերկրի շուկայում գերիշխող դիրք գրավելու, այլ իր շահույթն առավելարկելու համար (գծ. 12-21):


Յուրաքանչյուր արտադրողի դիրքերը, սովորաբար, տեղական շուկայում ավելի ամուր են, քան արտաքին շուկայում: Դա նշանակում է, որ նրա արտադրանքի նկատմամբ պահանջարկը ներքին շուկայում նվազ առաձգական է, քան արտաքին շուկայում: Գծ. 12-21-ում  $D_H$  պահանջարկն է ներքին շուկայում,  $D_F$  պահանջարկն է արտաքին շուկայում:  $MR_H$  և  $MR_F$  համապատասխան շուկաներում սահմանային հասույթներն են:

Համարենք, որ արտադրողի սահմանային ծախսերը հաստատուն են.  $MC$  ուղիղը հորիզոնական է:

Շուկաներից յուրաքանչյուրում առավելագույն շահույթ ստանալու համար արտադրությունն իրականացվում է սահմանային ծախսի և սահմանային հասույթի հատման կետում: Ներքին շուկայում դա  $Q_1$ , արտաքին շուկայում  $Q_2$  քանակն է: Համապատասխան գինը ներքին շուկայում կլինի  $P_1$ , արտաքին շուկայում՝  $P_2$ :

**Գծանկար 12-21:**

Ձեռնարկվելուց արտերկրում իրացնում է ավելի ցածր գնով, քանի որ արտերկրում իր արտադրանքի նկատմամբ պահանջարկն ավելի առաձգական է



Արտաքին շուկայում իրացման գինը ցածր է, քան ներքին շուկայում, բայց դա պայմանավորված է ոչ թե արտաքին շուկայում արտադրողներին դուրս մղելու անազնիվ մղումով, այլ պահանջարկի տարբեր առաձգականություններով:

Եթե արտադրողն արտաքին և ներքին շուկաներում կամովին որոշի սահմանել միևնույն գինը, ապա առավելագույն շահույթ ստանալու համար պետք է հաշվի առնի երկու շուկաների ընդհանուր պահանջարկը՝  $D_{H+F}$ , և համապատասխան սահմանային հասույթը՝  $MR_T$ : Այդ դեպքում թողարկումը կլինի  $Q_{3+4} = Q_3 + Q_4$ , իսկ գինը՝  $P_3$ : Թողարկման քանակից  $Q_3$ -ը ներքին շուկայի,  $Q_4$ -ը արտաքին շուկայի համար է: Արդյունքում՝ ներքին շուկայում գինը կլինի ավելի ցածր, արտաքին շուկայում՝ ավելի բարձր: Համապատասխանորեն՝ թողարկումը ներքին շուկայում կլինի ավելի շատ, արտաքին շուկայում՝ ավելի քիչ:


Իսկ եթե արտադրողն ընդհանուր գին չի սահմանում, և ներմուծող երկրի կառավարությունը (ենթադրյալ անազնիվ) գնագցումը չեզոքացնելու համար սահմանում է ներմուծման մաքսատուրք  $P_1 - P_2$  չափով, ապա արտաքին շուկայում արտադրողի ծախսը ( $MC$  ուղիղը) բարձրանում է  $P_1 - P_2$  չափով: Այդ դեպքում արտաքին շուկայում իրացումը կլինի էլ ավելի քիչ, գինը՝ էլ ավելի բարձր (ի բավարարություն ներմուծող երկրի արտադրողների):

## Տերմիններ

**Անվերականգնելի կորուստ**, (deadweight loss), մաքսատուրքի կամ այլ գործոնի հետևանքով բարեկեցության զուտ կորուստը:

**Առևտրի տեխնիկական արգելք**, (technical barrier to trade), տեխնիկական կարգավորում կամ պահանջ (պիտակավորման, փաթեթավորման, հավաստագրման), որը ներմուծման նկատմամբ կիրառվում է այնպես, որ ներմուծումը սահմանափակվի:

**Արտադրողի ավելցուկ**, (producer surplus), արտադրողի հասույթի և արտադրության ծախսերի տարբերությունը: Հավասար է առաջարկի (կամ սահմանային ծախսի) գրաֆիկից վերև և շուկայական գնից ներքև գտնվող տիրույթին: Երբ առաջարկի կորը կատարյալ առաձգական է, արտադրողի ավելցուկը զրո է:



**Գնագցում**, (dumping), ապրանքի իրացումն արտաքին շուկայում ավելի ցածր գնով, քան հայրենական շուկայում:

**Ընդհանուր հավասարակշռություն**, (general equilibrium), դիտարկվում է առաջարկի և պահանջարկի հավասարությունը բոլոր շուկաներում միաժամանակ: Գործնականում դիտարկվող շուկաների թիվը կարող է լինել ընդամենը երեքը: Այսպես՝ Ռիկարդոյի մոդելի պարզագույն տարբերակում դիտարկվում են միայն երկու ապրանքների և մեկ ռեսուրսի շուկաները, և, չնայած դրան, Ռիկարդոյի մոդելը ընդհանուր հավասարակշռության մոդել է:

**Լրավճար**, (subsidy), կառավարության կողմից արտադրողին տրվող վճար, որի արդյունքում իրացումից նրա ստացած փաստացի գինը գերազանցում է շուկայական գնին:


**Մասնակի հավասարակշռություն**, (partial equilibrium), դիտարկվում է առաջարկի և պահանջարկի հավասարությունը միայն որոշ շուկաներում (սովորաբար մեկ շուկայում), իսկ բոլոր մյուս շուկաների փոփոխականները համարվում են տրված:

**Մաքսատուրք**, (tariff), ներմուծվող կամ արտահանվող ապրանքի վրա սահմանված հարկ: Մաքսատուրքերը կարող են կիրառվել (i) կառավարության եկամուտների նպատակով, (ii) ներմուծումը սահմանափակելու նպատակով, երբ անհրաժեշտ է հավասարակշռել առևտրային հաշվեկշիռը, (iii) տեղական արտադրողին արտաքին առավել արդյունավետ մրցակցությունից պաշտպանելու նպատակով:

**Մաքսատուրքի ընդարձակում**, (tariff escalation), իրավիճակ, երբ մասնակի վերամշակված ապրանքների ներմուծման մաքսատուրքերը բարձր են, քան հումքի ներմուծմանը, իսկ վերջնական ապրանքների ներմուծման մաքսատուրքերն էլ ավելի բարձր են: Նպատակն է պաշտպանել տեղական վերամշակող արտադրությունները և նպաստել հումքի ներմուծումը:

**Սակազնային քվոտա**, (tariff rate quota), ներմուծման մաքսատուրքի և քվոտայի զուգորդում, երբ սահմանված չափից փոքր քանակը ներմուծվում է ցածր մաքսատուրքով, իսկ այդ չափից մեծ քանակը՝ բարձր մաքսատուրքով:

**Սպառողի ավելցուկ**, (consumer surplus), ապրանքը ձեռք բերելու համար առավելագույն գնի, որը սպառողը պատրաստ է վճարել և փաստացի շուկայական գնի տարբերությունը:



Սպառողի անհատական պահանջարկի գրաֆիկը ցույց է տալիս, թե սպառողը որքան է գնահատում ապրանքի հաջորդական միավորները: Սպառողն ապրանքը գնում է այն դեպքում, երբ այն գնահատում է առնվազն այնքան, որքան վճարում է: Անհատական սպառողական ավելցուկների գումարը տվյալ ապրանքի շուկայում ընդհանուր սպառողական ավելցուկն է:

Փաստացի պաշտպանություն, (effective protection), ներմուծման մաքսատուրքերի ազդեցությունը տվյալ ոլորտի ավելացված արժեքի վրա: Փաստացի պաշտպանությունը բարձր է, երբ վերջնական ապրանքների ներմուծման մաքսատուրքերը բարձր են, և ցածր է, երբ միջանկյալ ապրանքների ներմուծման մաքսատուրքերն են բարձր:

Փաստացի պաշտպանության դրույք, (effective rate of protection), հավասար է մաքսատուրքերի արդյունքում տվյալ ոլորտում ստեղծված ավելացված արժեքի հավելանքի կշռին:

Փոխառաջարկի կոր, (offer curve, reciprocal demand curve), երկու ապրանքի մոդելում ցույց է տալիս ապրանքի այն քանակը, որը տրված գնի դեպքում երկիրը կարտահանի (կառաջարկի) ներմուծման դիմաց:

Քանակական սահմանափակում, (quota), որոշ ապրանքի ներմուծման քանակական սահմանափակում: Սահմանափակումը կարող է լինել քանակային կամ արժեքային:

Օպտիմալ մաքսատուրք, (optimal tariff), մաքսատուրքի այնպիսի չափ, որի դեպքում երկիրը բարեկեցությունն առավելագույնն է: Փոքր բաց տնտեսությունում օպտիմալ մաքսատուրքը զրո է: Մեծ երկրում օպտիմալ մաքսատուրքը դրական է, քանի որ առևտրի պայմանները բարելավվում են:

## Հղումներ

- Berry, S., Levinsohn, J., & Pakes, A. (1995). Voluntary Export Restraints on Automobiles: Evaluating a Strategic Trade Policy: National Bureau of Economic Research.
- Global Trade Alert. (2015). EC: Definitive antidumping duty on aluminium foil from Armenia, Brazil and China.
- New York Times. (27.10.2005, Oct. 27). Cow Politics.
- OECD. (2015). *Agricultural Policy Monitoring and Evaluation 2015*: OECD publ.
- World Bank. (2016). Taking on Inequality.
- WTO. (1995). Agreement on Subsidies and Countervailing Measures.
- WTO. (2015). Statistics on anti-dumping. [www.wto.org/english/tratop\\_e/adp\\_e/adp\\_e.htm](http://www.wto.org/english/tratop_e/adp_e/adp_e.htm)